ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ
2022 թ.
№ 16 (1095)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Շնորհավոր հոբելյանդ, Մանկավարժական համալսարան

Մանկավարժական համալսարանը բոլորեց իր հիմնադրման 100 տարին: Փորձեք թերթել մեկ դարի պատմություն ունեցող բուհի տարեգրությունը և կհանդիպեք հարուստ ու հետաքրքիր էջերի:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում նոյեմբերի 6-ին տեղի ունեցավ բուհի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունը, ուր հին ու նոր սերնդի աբովյանականները միասին թերթեցին հարազատ բուհի պատմության էջերը, հիշեցին մանկավարժական կրթության երախտավորներին ու երևելիներին:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, Կառավարության անդամներ, հյուրեր արտերկրից, դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց բոլորին հոբելյանի առթիվ, արժևորեց բարձրագույն կրթօջախի տարեգրությունը կերտած երախտավորների գործը, նաև ընդգծեց ուսուցչի պատվավոր առաքելությունն իրականացնող շրջանավարտների տարբեր սերունդների ներդրումը: Նա հպարտությամբ նշեց, որ առաջնորդում է գիտական, կրթական և մշակութային մեծ ներուժ, և որ «մեր ժողովրդի ընդհանուր պատմության մեջ բուհի կենսագրությունը մի մասունք է, որտեղ ամփոփված է մեծ մտավորականների տարբեր սերունդների գիտական մտքի արգասիքը, մանկավարժ-գիտնականների տարիների անմնացորդ նվիրումն ու դեպի բարձրորակ կրթություն՝ անխափան ընթացքը»:

Սրբուհի Գևորգյանը խոսեց ուսուցչի ազգապահպան առաքելության և պետության անվտանգության երաշխավորի պատասխանատվության մասին, որով պայմանավորված է առողջ ու բանիմաց հասարակություն ունենալը: Մեկ դար շարունակ Մանկավարժական համալսարանը հավատարիմ այդ սկզբունքներին՝ զարգացման ու առաջընթացի ուղի է անցել:

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը շնորհավորեց բուհի հոբելյանը՝ փաստելով, որ Մանկավարժական համալսարանը հավատարիմ է մնացել իր ակունքներին, այն է՝ իրականացնել մանկավարժական գործունեություն, պատրաստել մանկավարժական կադրեր:

Նախարարը կարևորեց մանկավարժական կրթության դերը՝ ընդգծելով կրթության որակի ապահովման գործում բարեփոխումների անհրաժեշտությունը:

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց բոլորին հոբելյանի առթիվ՝ ընդգծելով, որ «100-ամյակը մի կարևոր հանգրվան է՝ արձանագրելու, որ մանկավարժի մասնագիտությունը և մանկավարժական կրթությունն ունեն ռազմավարական նշանակություն, որովհետև մանկավարժական կրթությունը կրթություն է կրթություն տալու մեթոդների, ձևերի, և այսօր արդեն՝ նաև տեխնոլոգիաների մասին»:

Վարչապետն ընդգծեց, որ հոբելյանը նաև լավ առիթ է՝ ամփոփելու աշխատանքը և պլանավորելու ապագան՝ միաժամանակ հավաստելով, որ մանկավարժական կրթության ապագային միտված կառավարության քայլերը առաջիկայում այդ ապագան կդարձնեն իրականություն:

Վարչապետն ասաց, որ Մանկավարժական կրթությունն ունի անկյունաքարային նշանակություն, և որ պետական մակարդակով կարևորվում է ուսուցչի աշխատանքը:

«Ինչպես բուհի ստեղծման օրերին, այնպես էլ այսօր կրթության ապահովումը ազգային անվտանգության խնդիր է: Մենք կանգնած ենք այդ խնդիրը լուծելու անխուսափելիության առաջ, և դա է պատճառը, որ հանրակրթության ոլորտում ձեռնարկվում են մասշտաբային բարեփոխումներ: Դրանց լուծումն անհնար կլինի առանց պրոֆեսիոնալ ուսուցչի, հետևաբար, մանկավարժական կրթության հետագա զարգացումը ևս ունի անկյունաքարային նշանակություն:

Հանրապետության ապագան և անվտանգությունը պետք է կերտվի մանկավարժական կրթության ոլորտում, Մանկավարժական համալսարանում: Ես հույս ունեմ, որ բոլորդ կաջակցեք այդ ապագային միտված մեր բարեփոխումներին»,- ասաց վարչապետը:

Նա շնորհակալություն հայտնեց մանկավարժության նվիրյալներին՝ կատարած աշխատանքի համար, նաև հաջողություն մաղթեց կատարվելիք աշխատանքում:

ՀՀ վարչապետը պարգևներ հանձնեց համալսարանի մի խումբ նվիրյալների. գիտության և կրթության ոլորտի զարգացման գործում ներդրած ավանդի համար ՀՊՄՀ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանն արժանացավ «Մովսես Խորենացի» մեդալի, մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում վաստակի համար ՀՊՄՀ Ուսումնագիտական հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանին շնորհվեց ՀՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

Գիտության և կրթության զարգացման գործում ներդրած ավանդի համար ՀՀ վարչապետի հուշամեդալով պարգևա-տրվեցին Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը, Կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Մեժլում Երիցյանը:

Երկարամյա անբասիր աշխատանքի համար ՀՀ վարչապետի շնորհակալագրով պարգևատրվեցին Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Ալեքսանդր Ղուշչյանը:

Համալսարանի 100-ամյակին նվիրված հանդիսությունն ամբողջական դարձավ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբի և երգչախմբի, «Բերդ» պարային անսամբլի, համալսարանի Պարարվեստի մանկավարժության բաժնի ուսանողների, Երգի պետական թատրոնի, Մանչախաղի թատրոնի և Կամո Սեյրանյանի կատարումներով:

Հոբելյանական միջոցառումների շարունակական ընթացքը

Նոյեմբերի 7-ը Մանկավարժական համալսարանի հիմնադրման օրն է: Մանկավարժական համալսարանի 100-ամյակի հոբելյանական միջոցառումների շարունակական ընթացքը լիազոր մարմնի ներկայացուցիչներին, հյուրերին, դասախոսներին և ուսանողներին այս անգամ միավորել էր Կուլտուրայի ֆակուլտետի հարկի ներքո:

Փոխնախարարներ Ժաննա Անդրեասյանը և Կարեն Թռչունյանը ԿԳՄՍ Ոսկե մեդալներ և պատվոգրեր հանձնեցին համալսարանի մի խումբ դասախոսների՝ մարդկանց, որոնք տարիների աշխատանքով իրենց սաների մեջ սերմանել են ուսուցչի որակներ և այն համոզմունքը, որ ուսուցիչ լինելը յուրահատուկ հպարտանք է:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը նախարարության Ոսկե մեդալ հանձնեց Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանին, Աշխատակազմի և միջազգային հարցերով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանին, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանին, Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Կարեն Հայրյանին, Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանին, Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռուզան Թադևոսյանին, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանին, Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին, Բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Աշոտ Գալստյանին:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը նախարարության պատվոգրեր հանձնեց պրոֆեսորներ Ռոբերտ Ջիջյանին, Իգոր Կարապետյանին, Շողիկ Ոսկանյանին, Արամ Քոսյանին, Անուշ Եղիազարյանին, պրոֆեսորի պաշտոնակատարներ Սուսաննա Փիլոսյանին, Վարուժան Հովհաննիսյանին, Անահիտ Լալաբեգյանին, դոցենտ Լուսինե Պողոսյանին, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Տեր-Գրիգորյանին:

Փոխնախարար և ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը չկարողացավ թաքցնել իր հիացմունքը Մանկավարժական համալսարանի նախորդ օրվա հոբելյանական գալա միջոցառման կազմակերպման առթիվ՝ փաստելով, որ Մանկավարժականն այսուհետ սահմանեց նոր նշաձող: Նա միաժամանակ ընդգծեց՝ Մանկավարժականում աշխատելը կամ նրա հետ առնչվելը պատիվ է յուրաքանչյուրի համար:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց նախկին ու ներկա աբովյանականներին՝ մի անթաքույց հպարտությամբ, որ իրեն է բախտ վիճակվել հոբելյանական տարում ղեկավարել մանկավարժական բարձրագույն կրթօջախը, որն ունի մեծ, հսկայական ներուժ: «Մանկավարժական համալսարանը հատուկ հենք է, հատուկ գունապնակ, ուր յուրաքանչյուր ժամանակ իր դիմագիծն ունի»,-ասաց ռեկտորը:

Դիմելով աբովյանականներին՝ նա ասաց. «Դուք արժանի եք ամենաբարձր պարգևների, որովհետև դուք վաղվա կերտողներն եք, ապագայի ճարտարապետները»:

Միջոցառմանը գեղարվեստական շունչ ու հմայք պարգևեցին Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ «Բերդ» պարային համույթի կատարումները (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Կարեն Գևորգյան):

«Հայաստանը կարծես Նիկողայոս Ադոնցն է...»

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանի «Նիկողայոս Ադոնց» գրքի շնորհանդեսը՝ նվիրված Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին:

Շնորհանդեսը բացեց ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ. Վարդան Դևրիկյանը, որն ընդգծեց գրքի կրթադաստիարակչական բնույթը՝ նշելով, որ հեղինակը ներկայացրել է գիտնականի ձևավորման ընթացքը՝ ծննդավայրից մինչև Գևորգյան ճեմարան, ապա ռուսական ակադեմիական ու եվրոպական կրթական կենտրոններ:

«Շատ դժվար է գրել Ադոնցի մասին թե՛ նրա հատորների տարողության, թե՛ թեմատիկ ընդգրկման պատճառով, բայց պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանին դա լավագույնս հաջողվել է»,-ասաց Վ. Դևրիկյանը:

Հանգամանորեն խոսելով գրքի մասին՝ Վարդան Դևրիկյանը ներկայացրեց Ալիտա Դոլուխանյանին որպես գրականագետի, արժևորեց գիտամանկավարժական վաստակը՝ համարելով նրան Գրականության ինստիտուտի առանցքային դեմքերից մեկը, ապա ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան ինստիտուտի տնօրինության որոշմամբ Ալիտա Դոլուխանյանին պարգևատրեց «Մանուկ Աբեղյան» հուշամեդալով՝ հայ գրականության և, ի մասնավորի, հայ միջնադարյան գրականության համընդգրկուն ուսումնասիրության ու եվրոպական հայագիտության նշանավոր դեմքերի գիտական ժառանգության և գործունեության համակողմանի ուսումնասիրության համար:

«Ալիտա Դոլուխանյանը ներկայացրել է՝ ինչպես է Ադոնցը դարձել խոշոր գիտնական՝ լայն պրոֆիլի պատմաբան, բանասեր, բյուզանդագետ, ինչ կնճռոտ խնդիրների է անդրադարձել: Հեղինակը գրել է ոչ միայն աշխարհահռչակ գիտնականի կենսագրության, անցած ճանապարհի, այլև ձեռք բերած գիտական նվաճումների մասին, ինչը չափազանց արժեքավոր է դարձրել գիրքը»,-ասաց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը:

Յու. Սուվարյանը շնորհավորեց Ա. Դոլուխանյանին վերջին երկու՝ Մորուս Հասրաթյանին և Նիկողայոս Ադոնցին նվիրված հրապարակումների առթիվ՝ ակնկալելով գիտնականից նոր գրքեր:

ՀՊՄՀ ռետոր, հ.գ.դ., պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը 100-ամյա բուհի ողջ համակազմի անունից շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և շնորհակալություն հայտնեց Ալիտա Դոլուխանյանին՝ հերթական գրքի հրատարակման առթիվ: Ռեկտորը կարևորեց համալսարանի համար որպես առաջնահերթություն գրքի կրթադաստիարակչական արժեքը, ապա անդրադարձավ բյուզանդագետ, պատմաբան, մանկավարժ, փայլուն կրթություն ստացած Ադոնցի կրթական զարգացումներին՝ ընդգծելով՝ նա կրել է ժամանակի լավագույն կրթական ազդեցությունը:

Ռեկտորը մասնավորպես կարևորեց հանրահռչակ գիտնականի գործի պատմագիտական նշանակությունը հայ ժողովրդի համար, խոսեց մագիստրոսական և դոկտորական հետազոտությունների մասին, որոնցում ներկայացվել են ժամանակի կարևորագույն խնդիրները:

«Խոսելով գլոբալիստական միտումների մասին՝ մենք, այնուամենայնիվ, շեշտադրում ենք հայ ինքնության պահպանման խնդիրը,-հավելեց ռեկտորը:- Կարծում եմ Ն. Ադոնցի ժառանգությունը՝ համագործակցությամբ իր ղեկավարի՝ Ն. Մառի, պատմական այն ժամանակաշրջանի կարևոր ձեռքբերումն է, որ կարող է Մանկավարժական համալսարանի այսօրվա ուսանողի համար յուրահատուկ գոհար դառնալ հենց արդի շրջանի կրթության զարգացման առումով:

Իր ժամանակի մեջ նրա հոդվածները մեծագույն ներդրումներ էին, որոնց մասին մենք քիչ ենք խոսում, բայց պարտավոր ենք մեր մեծերին մշտապես անդրադառնալ մեր լսարաններում: Շնորհակալություն տիկին Դոլուխանյանին, որի աշխատանքի նշանակությունն ինձ համար հենց այդ առաջնահերթությամբ է պայմանավորված, որովհետև մանկավարժությունը սոսկ տեսություն չէ, դասավանդման մեթոդիկան է, կոնկրետ օրինակների, պատմության, ավանդույթների փոխանցման որոշակի գործընթաց է»:

Ռեկտորը հղում արեց Մուշեղ Իշխանի հուշերին. «Հայաստանը կարծես Նիկողայոս Ադոնցն է, նրա լավագույն հատկանիշների մարմնավորումը, նրա մարդկային պատկերը, նա հայ տղամարդ էր՝ բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով....»՝ ընդգծելով՝ թող բոլոր այս իմաստները այդ ժառանգության ներքո ուսանողների սերտման համար դասագրքային նյութ լինեն:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի կարծիքով՝ «համարձակություն է պետք՝ գնալու դեպի Ադոնցը»:

«Երիտասարդության տարիներին դժվար է ուսումնասիրել Ն. Ադոնցի ժառանգությունը, երբ տեսա, որ գիրքը ձեռնարկի տեսքով է գրված, նոր հասկացա, որ հեղինակը դյուրին է դարձրել երիտասարդության համար՝ հասկանալու գիտնականի ապրած ժամանակը»,-ասաց ակադեմիկոսը:

Ա. Մելքոնյանը խոսեց հեղինակի՝ պատմական ժամանակշրջանը հետաքրքիր ոճով ներկայացնելու մասին, որպեսզի ընթերցողը պատկերացնի միջավայրը, անդրադարձավ այն պատմական կերպարներին, որոնց մասին գրել է Ադոնցը: «Ադոնցի գործունեության մասին խոսելիս պետք է անպայման հիշել՝ Ադոնցը ստացել է դասական կրթություն եվրոպական քաղաքներում, շփվել 19-րդ դարի կեսերի հնդեվրոպականների հետ, իմացել տասնյակից ավելի լեզուներ, ստեղծագործել երեք լեզվով, զբաղվել հայկական հարցով...»:

Բանախոսն ամփոփեց՝ Ն. Ադոնցի մեծությունը հասկանալն այնքան էլ հեշտ չէ, բայց այս գրքի օգնությամբ կարող ենք:

Ելույթ ունեցան Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, Հայկական հանրագիտարանի խմբագիր, ք.գ.դ. Հովհաննես Այվազյանը, Ալբերտ Մուշեղյանը, Սուսաննա Հովհաննիսյանը, որոնք անդրադարձան Ալիտա Դոլուխանյանի գիտական լուրջ ուսումնասիրությանը, արժևորեցին այն մերօրյա իրադարձությունների համատեքստում և գնահատեցին Ալիտա Դոլուխանյանին, որը «մշտապես արժևորում է արժեքավորը»:

Պրոֆեսոր Դոլուխանյանն ընդգծեց, որ շնորհանդեսը նվիրված էր Նիկողայոս Ադոնցին և իր նպատակն էր մեծարել միջազգային համբավ ունեցող բյուզանդագետին, հայագետին, պատմաբանին, բանասերին, մանկավարժին՝ նրա կյանքը, կրթությունը, գիտական ժառանգությունը օրինակ դարձնելու նոր սերնդի համար:

Գրքի շնորհանդեսը հաճելիորեն սպասված էր, ակադեմիական միջավայրում կին գիտնականի բեղուն աշխատանքի գնահատանքը՝ օրվա պահանջ:

Ներկաները շնորհավորեցին Ալիտա Դոլուխանյանին նաև գինեձոնով՝ գիտնականին մաղթելով նոր գրքեր ու հրապարակումներ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հոգեբանների միասնական աշխատանքը մեկ հարթակում

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետը Մանկավարժական համալսարանում կազմակերպել էր «Պատերազմի սոցիալ-հոգեբանական հետևանքները» խորագրով երկօրյա միջազգային գիտագործնական գիտաժողով՝ նվիրված համալսարանի հիմնադրման 100-ամյակին:

Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվող գիտաժողովի գաղափարը ծնվել էր դեռևս 2020 թվականի պատերազմի օրերին, երբ Մանկավարժական համալսարանի հոգեբանները աշխատում էին հոգեկան տրավմա ստացած զինվորների և նրանց ընտանիքների անդամների հետ: Հոգեբանության ամբիոնի վարիչ Լևոն Սարգսյանը ցավով նկատեց, որ գիտաժողովի խորագիրը խիստ արդիական է և շարունակում է մնալ այդպիսին, նաև ընդգծեց որպես ձեռքբերում 2019 թվականին ստեղծված «Հոգեբանական հիմնախնդիրներ» պարբերականը:

Գիտաժողովն աշխարհագրական ընդգրկում ուներ. մասնակցում էին ոչ միայն Հայաստանի և Արցախի տարբեր բուհերի և կենտրոնների հոգեբաններ, այլև ոլորտի մասնագետներ Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Բելառուսից, Ղրղզստանից:

Համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց գիտապրակտիկ գիտաժողովի նախաձեռնումը և շնորհակալություն հայտնեց

պատերազմի օրերին ու հետպատերազմական ժամանակահատվածում լայնածավալ աշխատանք կատարած բոլոր հոգեբաններին ու հոգեբանական կենտրոնների ներկայացուցիչներին: Նա հիշեց տրավմաների ենթարկված զինվորների, հաշմանդամների և նրանց ընտանիքների անդամների հետ բժշկական բոլոր կենտրոնների կատարած վերականգնողական աշխատանքները՝ նշելով, որ այսօր էլ հոգեբանական լուրջ հիմնավորումներ են պետք բանակի ոգին բարձրացնելու համար, որովհետև «Արցախը մեզ համար այն հիմնախնդիրն է, որի հանդեպ մեր ամենօրյա հոգածությունն է պետք»:

«Մենք լայնածավալ սթրեսագեն գոտի ենք: Պատերազմը որպես երևույթ քիչ է ուսումնասիրված. այն ավելի շատ հոգեբանական և սոցիալ-հոգեբանական խնդիր է»,-ասաց ռեկտորը՝ ընդգծելով գիտաժողովի նպատակը՝ վերլուծել, կիսել գիտապրակտիկ մոտեցումները:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ներկաներին մաղթեց տարակարծությունների լայն գունապնակ՝ հոգեբանական դաշտում գտնվող յուրաքանչյուրին մաղթելով որակական քննարկումներ ու նոր մոտեցումներ:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանն ընդգծեց, որ բուհի 100-ամյակը նշվում է սոցիալ-հոգեբանական բարդ մարտահրավերների պայմաններում՝ փաստելով քննարկվող թեմայի արդիականությունն ու ոլորտի մասնագետների աշխատանքի կարևորությունը: Դեկանն իրավացիորեն նշեց՝ սա հարթակ է՝ որոշումներ կայացնելու, լուծումներ գտնելու, որոնք կծառայեն բանակին:

Դեկանը խոսեց բնակչության հոգեբանական աջակցության և անվտանգության ապահովման կարևորության մասին՝ հիշելով, որ համավարակի օրերին անգամ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմն անհրաժեշտ աջակցություն էր ցուցաբերում պատերազմի հետևանքով հոգեկան տրավմա ստացած մարդկանց:

ԵՊՀ պրոֆեսոր Հրանտ Ավանեսյանն ու ԵՊԲՀ դոցենտ Վլադիմիր Գասպարյանը ներկայացրին «Հոգեբանական ծառայության կազմակերպման և գործառույթների յուրահատկությունները 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո»:

ԵՊՀ հոգեբանության ամբիոնի վարիչ Հրանտ Ավանեսյանը խոսեց պատերազմի օրերին հոգեբանների ցուցաբերած միասնական ջանքերի ու ներդրման, նրանց արագ կազմակերպվելու, մարդկանց և հասարակության կողքին լինելու մասին՝ փաստելով, որ հոգեբանների առաքելությունն է նման պահերին լինել մարդու և հասարակության կողքին: Զեկուցողը ներկայացրեց, որ իրավիճակի պարտադրմամբ ներառվեցին շուրջ երեք տասնամյակի փորձ ունեցող մասնագետներ և 2500 շահառուների հետ աշխատանքը կազմակերպվեց ստեղծված ձևաչափով:

«Մեր ոլորտում կարիք ունենք կազմակերպվելու,-ասաց Հ. Ավանեսյանը՝ ընդգծելով, որ պրակտիկան և գիտությունը պետք է միասին լինեն, և պրակտիկան պետք է հենվի գիտության վրա»:

Երևանի պետական բժշկական համալսարանի դոցենտ Վլադիմիր Գասպարյանը խոսեց հոգեբանական ծառայության, կազմակերպման և գործառույթների մասին: Նա ներկայացրեց 103 մասնագետների, որոնք աշխատում էին 26 կենտրոններում «Ինտրա» կազմակերպության հետ համատեղ: Զեկուցողն անդրադարձավ այն ահռելի աշխատանքին, որն իրականացվեց տրավմա ստացած զինվորների ու սպաների հետ Դիլիջանում: Հատուկ թեստերի միջոցով նա ներկայացրեց տրավմային և հետտրավմային իրավիճակներում գտնվող մարդկանց հետ աշխատանքի վիճակագրությունը՝ հիմնական ախտանշաններով. քնելու հետ կապված և հիշողությունների ակամա ներխուժումներ, հիշողություններ, որ ուղեկցվում էին ֆիզիոլոգիական դրսևորումներով ու բացասական հույզերով, ուշադրության կենտրոնացման և այլ խնդիրներ, որոնց ուղղությամբ էին համատեղվել հոգեբանների ու նյարդաբանների ջանքերը:

Պրոֆեսոր Գասպարյանը հետտրավմային աճի մասին տեղեկատվությունն ամփոփեց օրինակներով՝ ընդգծելով՝ հետտրավմային աճի ուսումնասիրությունը պետք է լինի համազգային ստրատեգիա, ռազմավարություն:

«Կյանքի արժևորման փոփոխությունը բերում է հոգևոր աճի: Պետք է նոր սերնդի տոկունությունը զարգացնել, որպեսզի թույլ չտանք թշնամին մեզ հոգեպես կոտրի»,-ասաց զեկուցողը՝ շեշտադրելով բոլոր հոգեբանների միասնական աշխատանքն այդ ուղղությամբ:

ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային աշխատանքի գծով պրոռեկտոր, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի դոցենտ Մարիաննա Հարությունյանը հանդես եկավ «Էրգոթերապևտիկ միջամտության մեկնաբանումը վիրավոր զինվորների հետ աշխատանքում» զեկուցումով: Նա ներկայացրեց՝ 8 էրգոթերապիայի մասնագետներ 6 ամիս շարունակ նպատակաուղղված աշխատանք են իրականացրել պատերազմի 150 մասնակիցների հետ, օգնել նրանց՝ հասնելու ինքնուրույնության:

Արցախյան երկրորդ պատերազմի վիրավոր զինվորների հետ տարվող աշխատանքի մասին թեմայի արդիականությամբ պայմանավորված գրվել են նաև մագիստրոսական թեզեր:

Զեկուցողը խոսեց պատերազմի վիրավորներին ցուցաբերված էրգոթերապևտիկ աջակցության և միջամտության առանձնահատկությունների մասին՝ ներկայացնելով հիմնականում ձեռքի վերականգնողական ֆունկցիայի վերականգնման աշխատանքի արդյունքները: Նա ընդգծեց հիվանդանոցներում և վերականգնողական կենտրոններում էրգոթերապիայի մասնագետների աշխատանքի կարևորությունը, ցավով նկատելով, որ այդ մասնագիտության մասին իրազեկելու խնդիր ունենք:

Մոսկվայի Հումանիտար գիտությունների պետական ակադեմիական համալսարանի դասախոս Նատալյա Ռիբալչենկոն խոսեց պատերազմի միջով անցած մարդկանց՝ պատերազմի վետերանների մասին՝ կարևորելով նրանց հետ աշխատանքը, որովհետև «տարիքի հետ հետպատերազմյան զգացողությունները կարող են ավելանալ»:

Ն. Ռիբալչենկոյի ամուսինը մասնակցել է Աֆղանստանի պատերազմին: Նրա դիտարկումները նաև բխում էին վերոհիշյալից: Տարբեր խմբերի հետ ուսումնասիրության հետազոտական աշխատանքի արդյունքում նա եկել է եզրակացության, որ պատերազմի վետերանները հոգեբանական բարելավման խնդիր ունեն, ինչը պայմանավորված է նրանց կենսակայունությամբ:

Արցախի պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանի զեկուցումը վերաբերում էր 44-օրյա պատերազմի մասնակիցների մոտ հետվնասվածքային սթրեսի հաղթահարման խնդիրներին:

Զեկուցողն ընդգծեց, որ այսօր ոչ միայն Արցախը, այլև Հայաստանը հայտնվել են գոյաբանական սպառնալիքների առջև, ներկայացրեց պատերազմի և հետպատերազմյան ընթացքում պատերազմի մասնակիցներին հոգեբանների կողմից ցուցաբերված օգնությունը, ներկայացրեց դիտարկումներ, պնդումներ, եզրակացություններ՝ բնութագրելով 44-օրյա պատերազմը որպես 5-րդ սերնդի պատերազմ:

Հատկապես անդրադարձ արեց նոր պատերազմի բնութագրիչներին՝ գերճշգրիտ զինատեսակներ, մարտավարության նոր մեթոդներ, ահաբեկիչներ, տեղեկատվական և հոգեբանական ներազդման միջոցներ: Վ. Յարամիշյանը թվերի ու փաստերի միջոցով ներկայացրեց պատերազմի հետևանքները՝ Արցախի տարածքի 75 տոկոսի կորուստ, մարդկային անթիվ զոհեր, նաև ներկայացրեց թիկունքն ու առաջնագիծը՝ չմոռանալով խոսել կեղծ լուրերի, խուճապի առաջացման և դասալքության դեպքերի մասին:

Արցախի պետական մանկավարժական համալսարանը 26 զոհ է տվել, բազմաթիվ հաշմանդամներ ու անհետ կորածներ: Պատմական ակնարկով և տոկոսային հարաբերությամբ ներկայացնելով տարբեր երկրներում մարդկանց հետպատերազմական սթրեսը՝ նա ընդգծեց, որ միայն Արցախի պատերազմի հետևանքով է, որ սթրեսի է ենթարկվել գրեթե ողջ բնակչությունը:

Խոսելով պատերազմի հետևանքով հետվնասվածքային խանգարումների մասին՝ նա շեշտեց՝ դրանք խնդիր են, ոչ թե դատավճիռ, և կարևորեց բազմամասնագիտական խմբի աշխատանքը:

Ամփոփելով իր խոսքը՝ նա ասաց, որ 44-օրյա պատերազմը կանգնեցրել է բավականին դժվար գոյաբանական ճգնաժամի առաջ, և Արցախը միայնակ չի կարող հաղթահարել այն: Բանախոսը հորդորեց՝ կանգնել Արցախի կողքին՝ աջակցել հաղթահարելու խնդիրները:

Պլենար նիստում զեկուցումով հանդես եկավ նաև ՀՊՄՀ պրոֆեսոր Մելս Մկրտումյանը: Պրոֆեսորի զեկուցման թեման վերաբերում էր պատերազմի մասնակից զինվորականներին ցուցաբերվող հոգեբանական օգնության կազմակերպման սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին:

Գիտաժողովի երկրորդ օրը հագեցած էր առցանց զեկուցումներով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Բելլա ՄԱՐԿՈՎՆԱ. Խոհուն ու խիզախ մտավորականը

«Ռուսաց լեզուն՝ 21-րդ դարի մշակութային երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային հաղորդակցության երաշխավոր». Ակադեմիկոս, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բելլա Մարկի Եսաջանյանի այս տողերն անչափ խոսուն են, նաև բնորոշում են հենց իրեն, իր մտածողության և աշխարհայացքի մեծությունը:

Մեծ մանկավարժի՝ սերունդներին թողած գիտական ժառանգությունն ու գործունեությունը ռուսաց լեզվի ջատագովներին, Հայաստանում ՌԴ դեսպանատան, «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցիչներին, ռուսաց լեզվի և գրականության դասավանդողներին, ուսուցիչներին, ասպիրանտներին և մագիստրոսներին, տարբեր տարիների շրջանավարտներին հավաքել էր Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հարկի ներքո: Առիթը գիտնական - մանկավարժի ծննդյան 90-ամյակն էր, որ համատեղվել էր համալսարանի 100-ամյակի հետ:

Գիտապրակտիկ կոնֆերանսը վարում էր Հայաստանում ռուսաց լեզվի ուսուցիչների ասոցիացիայի նախագահ Լիլյա Բալասանյանը:

«Գիտաժողովը կոչված է միավորելու սերունդների համար ռուսական խոսքի հարստությունը բացահայտող բոլոր մասնագետներին»,-գիտաժողովի անցկացման առթիվ իր ուղերձում ընդգծել էր ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: «Զարմանալի կին, տաղանդավոր մանկավարժ, որի յուրաքանչյուր միտք թևավոր խոսքի իմաստ ուներ, առանձնահատուկ հումորն ու մտավորականի կեցվածքն էլ մի առանձին հմայք էին հաղորդում նրա կերպարին»,-ասաց պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը՝ անդրադառնալով մանկավարժ գիտնականի գործունեությանն ու Հայաստանում ռուսաց լեզվի դասավանդման տեսությանն ու մեթոդիկային նվիրված նրա աշխատանքներին:

ՀՀ-ում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ղեկավար Վադիմ Ֆեֆիլովն իր ուղերձում

կարևորել էր ՌԴ մանկավարժական և սոցիալական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի 90-ամյակին նվիրված գիտաժողովը՝ արժևորելով գիտնական մանկավարժի մեծ ժառանգությունն ու ներդրումը երիտասարդ սերունդներին երկրի հարուստ մշակութային ժառանգությանը ծանոթացնելու գործում.. «Ոսկե դարը կգա այն ժամանակ, երբ մանկավարժությունը կբարգավաճի: Շնորհակալ ենք, որ նա այդ ոսկեդարը մոտեցրեց մեզ»:

Ելույթ ունեցողները խոսեցին Բելլա Եսաջանյանի՝ Հայաստանում ռուսաց լեզվի ուսուցման, երկլեզվյան ուսուցման գործում ունեցած մեծ ներդրման, ստեղծած դասագրքերի, մեթոդաբանության, տեսության և պրակտիկայի մշակման ու մարդկային որակների մասին:

Հիբրիդային ձևաչափով անցկացվող գիտաժողովը ողջունեցին և առցանց ձևաչափով գիտնականի մասին իրենց հուշերը ներկայացրին պրոֆեսոր Լեոնիդ Մոսկովկինը Սանկտ Պետերբուրգից, դոցենտ Մարգարիտա Բերսենևան Մոսկվայի միջազգային ինստիտուտից:

Բելլա Եսաջանյանի հետ համագործակցության տարիների մասին պատմեց Սերգեյ Հովհաննիսյանը, ով ընդգծեց Բելլա Մարկովնայի ունեցած անգնահատելի դերը ոլորտում, և մասնավորապես նրա լեզվաբանական բարձր պատրաստվածությունը, առանց որի հնարավոր չէր դասավանդման մեթոդներ կիրառել:

Մանկավարժական համալսարանի Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը եղել է անվանի գիտնականի 50-րդ ասպիրանտը: Նա գիտական ղեկավարին բնութագրեց՝ խելացի, խոհուն, խիզախ մտավորական, անսահման բարության տեր կին, ով գործի պրոֆեսիոնալ էր նաև դասագրքերի ու ամսագրի ստեղծման գործում, ճանաչված Հայաստանում ու նրա սահմաններից դուրս, գիտնական, որի մասին դեռ երկար կխոսեն:

«Նա շատ բարձր էր գնահատում հայ դպրոցը, ամեն ինչ անում էր հայ դպրոցում ռուսաց լեզուն զարգացնելու համար,- ասաց մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը:-Մարդիկ կան, որ մթնոլորտ են ստեղծում. Բելլա Մարկովնան այդ մարդկանցից էր»:

65 տարվա մանկավարժական գործունեություն, 50 գիտական աշխատանքի ղեկավարում, 20 տարի ՀՊՄՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ղեկավար, դասագրքեր ու ամսագրեր, այդ թվում՝ ԱՊՀ-ում նրա ղեկավարությամբ տպագրված առաջին ամսագիրը՝ «Մշակույթների երկխոսություն» վերնագրով, երկլեզվյան հայեցակարգի մշակում, ռազմավարության և մարտավարության հմուտ զուգադրում…

Պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը վերարժևորեց գիտնականի հետ՝ տարիների իր համագործակցությունը՝ ընդգծելով՝ նա մեր դեսպանն էր միության և աշխարհի մասշտաբով:

Պրոֆեսոր Մանուկ Մկրտչյանը գիտնականին ներկայացրեց որպես մեթոդոլոգիական մտածողության տեր անհատի, ով անփոխարինելի էր իր ոլորտում:

Ելույթ ունեցան Հայաստանի Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի լեզուների ամբիոնի վարիչ Վաղարշակ Մադոյանը, ֆիզիկոս մանկավարժ Աիդա Հարությունյանը, գիտնականի ուսանողուհի Նաիրա Դալյանը:

Վերջինիս թեկնածուական աշխատանքը ևս ղեկավարել է անվանի գիտնականը, նրա շնորհիվ Ն. Դալյանը Մոսկվայում դոկտորական ատենախոսություն է պաշտպանել: Ուսանողուհին հիշում է՝ նա բոլորիս վարակում էր իր լավատեսությամբ ու սովորելու ձգտումով:

Ելույթ ունեցան Ռուսաստանի Դաշնության գիտակրթական կենտրոնների ներկայացուցիչներ, որոնք խոսեցին համատեղ կազմակերպած ծրագրերի ու նախագծերի մասին:

«Նա այնպիսի հետք է թողել իր ուսանողների մեջ, որ նրան երկար պիտի հիշեն ու առաջնորդվեն նրա մանկավարժագիտական հետազոտություններով»,-ասաց Լիլյա Բալասանյանը: -Նշանավոր գիտնականը պատկանում է ոչ միայն Հայաստանին, այլև բոլոր այն երկրներին, որոնց հիմնադրամների, ասոցիացիաների և կազմակերպությունների անդամն էր»:

Նա նոր մտքերի ու գաղափարների ստեղծող էր, նաև մեծ էր նրա դերը ռուս և ազգային բազմալեզվության մեթոդների ստեղծման ու կիրառման գործում»,-ամփոփեց Լ. Բալասանյանը:

Ելույթ ունեցողների վառ հուշերն ու տպավորությունները ներկաների մեջ նորովի բացահայտեցին Բելլա Եսաջանյան գիտնականի, մանկավարժի և պարզապես հիանալի կնոջ կերպարը՝ նրանով ոգեշնչված շարունակելով գիտաժողովի երկրորդ մասը, որտեղ ներկայացված զեկուցումներում անդրադարձան Հայաստանում ռուսաց լեզվի դասավանդման հիմնախնդիրներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՃՇՄԱՐԻՏԻ, ԳԵՂԵՑԻԿԻ ԵՎ ԲԱՐՈՒ ՆԵՐԴԱՇՆԱԿ ՏՐՈՓՅՈՒՆՈՎ ԲԱԲԱԽԵԼՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմեական մեծագույն ճարտարապետ և արվեստի տեսաբան Մարկոս Վիթրուվիոսը ճարտարապետական կառույցի հիմքում դնում է երեք սկզբունք, որոնք նշանակալից են դարձնում կառույցը՝ օգտակարությունը, ամրությունը և գեղեցկությունը: Ամենամեծ ու ամենանշանակալից ճարտարապետական կառույցը Աշխարհն է՝ տիեզերքը, աստղերն ու աստղաբույլերը, մեր այս փոքրիկ Երկիր մոլորակը՝ իր բնությամբ՝ կենդանական և բուսական աշխարհով, իր մարդկանցով… Ո՞վ է այդ հոյակերտ կառույցի հեղինակը: Անհիմանալի հարցադրում է սա, որի պատասխանը մեր իմաստուն նախնիների կողմից տրված է մեկ ընդգրկուն բառով՝ Աստված: Չկա աստվածային այս Աշխարհ-կառույցից ավելի օգտակար, ավելի ամուր և ավելի գեղեցիկ ճարտարապետական կառույց, ու չկա նրա հեղինակից ավելի հանճարեղ ճարտարապետ:

Այդ ճարտարապետն իր աստվածային կառույցի անթերի չափն ու ձևը կատարել է մաթեմատիկայի միջոցով: Եվ դարեր շարունակ մարդիկ նույնպես իրենց ճարտարապետական կառույցներում աշխատում են պահպանել Վիթրուվիոսի նշած սկզբունքները, որոնց չափն ու ձևը կատարում են մաթեմատիկական հաշվարկներով:

Եվս մի բացառիկ ճարտարապետական կառույց է մարդը, որի շինանյութը՝ երեխան, աստվածային ստեղծագործություն է, իսկ նրանից ՄԱՐԴ կերտելու շնորհն էլ վերապահվում է առանձին ընտրյալների, որոնց մեր ժողովուրդը դարեր շարունակ մեծարում է Ուսուցիչ նվիրական անունով:



Արդեն ուղիղ հարյուր տարի է, ինչ Մանկավարժական ինստիտուտ-համալսարանը զբաղվում է հայոց աշխարհի համար այդ նվիրական մասնագետների պատրաստման առաքելությամբ: Ու այդ սրբազան գործն իր գործընկերների հետ միասին իրականացնում է նաև մաթեմատիկոս-մանկավարժների մի քանի սերունդ: Ու բոլոր այդ սերունդների գործունեության մեջ ամրության, օգտակարության և գեղեցկության վիթրուվիոսյան սկզբունքները աներևույթ ներկայություն են ունեցել:

Իսկապես, այստեղ, մայր Մանկավարժականում մաթեմատիկայի ապագա ուսուցիչն առաջին հերթին հասկանում է, որ «մաթեմատիկան լեզու է, որով գրված է բնության գիրքը, և այդ գիրքը կարդալու համար պետք է իմանալ մաթեմատիկայի լեզուն»: Եվ որ այդ լեզվի իմանացությունը դառնում է բանալի ինչպես յուրաքանչյուր մարդու առօրեական կյանքի կազմակերպման, այնպես էլ բնությունը ճանաչելու, նրա գաղտնիքները իմանալու հարցերում: Եվ որ մաթեմատիկական ճանաչումը ճշմարտության բացահայտման բացառիկ, իր նմանը չունեցող գործընթաց է, որ ուղեկցվում է անթերի ապացուցումով, և այդ պատճառով է, որ բնական գիտությունների ու տեխնիկայի մեջ կատարված հայտնագործությունների հիմքում դրված չափն ու ձևը կատարվում է մաթեմատիկայի միջոցներով: Ու բոլոր այդ կառույցներում մաթեմատիկական այդ չափն ու ձևն է, որ ապահովում է դրանց ամրությունը և օգտակարությունը:

Այստեղ մաթեմատիկայի ապագա ուսուցիչը կարողանում է հասկանալ, որ «Մաթեմատիկան տիրապետում է ոչ միայն ճշմարտությանը, այլև բարձրագույն գեղեցիկին: Հղկված ու խիստ, վեհորեն մաքուր և կատարյալին ձգտող նման գեղեցկությունը հատուկ է միայն արվեստի մեծագույն ստեղծագործություններին»: Ու որ այդ գեղեցիկի տիրապետումը գեղեցիկ է դարձնում նաև մարդկային հոգիները, սովորեցնում է ճանաչել, գնահատել և ապրել գեղեցիկով:

Այստեղ մաթեմատիկայի ապագա ուսուցիչը հասկանում է, որ մաթեմատիկան բարիք է, ու ինքն այդ բարիքը մատաղ սերնդին հասցնող ու բաժանող առաքյալն է դառնալու, ու ինքը և նաև իր ապագա սաներն իրենց գործողություններում պետք է բարի ու արդար լինեն:

Այստեղ մաթեմատիկայի ապագա ուսուցիչը կարողանում է հասկանալ, որ մաթեմատիկան ունի մարդկային ոգու կռման անփոխարինելի խորհուրդներ, որոնք ունակ են կոփելու, հզորացնելու իրենց ապագա սաների ոգեղեն էությունը, նրանց մատաղ հոգիներին հաղորդելու ճշմարիտի, գեղեցիկի և բարու ներդաշնակ տրոփյունով բաբախելու երջանկությունը…

Համլետ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ֆիզմաթ գիտ. թեկնածու, մ.գ.դ., պրոֆեսոր

ՄԱԿ-ի կեկույցի համապեքստում

Մանկավարժության ամբիոնի և ԴԻ ՎԻ Վի ինթերնեյշնալի կազմակերպության հայաստանյան գրասենյակի համատեղ նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում անցկացվեց «Դի ՎԻ ՎԻ. Ապագայի հեռանկարներ» խորագրով ինտերակտիվ քննարկում:

Ներկաներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ կարևորելով համալսարանի 100-ամյակի առթիվ կազմակերպված քննարկումը: Ռեկտորը խոսեց միջազգային կազմակերպության հետ ամբիոնի լայնածավալ գործունեության մասին՝ քննարկման համատեքստում ընդգծելով. «Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները մեծապես կապված են կրթական ոլորտի հետ: Բազմաթիվ քննարկումներում բարձրացվում են հարցեր, որոնք վերաբերվում են հասարակությանը, մարդկանց կյանքի որակի բարելավմանը»:

Սրբուհի Գրորգյանը հույս հայտնեց, որ ԴԻ ՎԻ Վի ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի հետ բուհի համագործակցությունը բովանդակալից և երկար է լինելու:

ԴԻ ՎԻ Վի ինտերնեյշնալ կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն էսթեր Հակոբյանը ներկայացրեց Գերմանիայում արդեն 100-ամյա, իսկ Հայաստանում 20-ամյա պատմություն ունեցող կազմակերպությունը: Նա ընդգծեց, որ աշխատանքները միտված են ոչ ֆորմալ կրթությանը, կրթական հարթակների հետ համագործակցության, համատեղ ջանքերի միջոցով կրթական փոփոխություններին, որոնցից մեկն էլ ներկա հանդիպումն է:

Նա շնորհավորեց բուհի 100-ամյակը և էսսեների մրցույթում հաղթող ճանաչված երեք ուսանողի՝ Արուս Այվազյանին, Անի Հարությունյանին և Էլեն Ավետիսյանին մրցանակներ հանձնեց:

Կազմակերպության հայաստանյան գրասենյակի ծրագրերի համակարգող Միշա Թադևոսյանը խոսեց Հայաստանում կազմակերպության գրասենյակի ստեղծման 20-ամյա պատմության, ծրագրերի ու խնդիրների շուրջ:

Կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը ներկայացրեց «Վերաիմաստավորելով մեր համատեղ ապագայի հեռանկարները: Հանրային նոր համաձայնագիր ի նպաստ կրության» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության հեռանկարների հարցերով միջազգային հանձնաժողովի զեկույցի հիմնական դրույթները՝ փորձելով դրանք տեղայնացնել հայաստանյան կրթական միջավայրում: Զեկուցումը կրում էր «Կրթության ապագա հեռանկարներ. միջազգային և ազգային միտումներ» խորագիրը:

Զեկուցողն անդրադարձավ կրթության մեջ սոցիալական դաշինքի կետերին, որոնց փոփոխման անհրաժեշտություն կա, հասարակական-առանցքային խնդիրներին՝ կլիմայի փոփոխություն, ժողովրդավարության նահանջ և այլն, կրթությանը՝ որպես մարդու իրավունք և հանրային բարիք: Նա մասնավորապես խոսեց կրթական հաստատություններում արմատավորված կարծրատիպերի և անհրաժեշտ փոփոխությունների մասին:

Ըստ ՄԱԿ-ի զեկույցի՝ նա առաջարկեց նոր մանկավարժության մոդելներ՝ վստահեցնելով, որ պետք է հրաժարվել հին մոդելներից, դասերից, մեթոդներից ու գնահատման ձևերից՝ ընդգծելով, որ Հայաստանում կրթությունը բավականին անհատապաշտական է և մրցակցային, նաև բերելով ֆիննական կրթության օրինակը:

«Նոր մանկավարժությունը փոխհարաբերություն է, սոցիալական արվեստ. թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը ձևափոխվում են մանկավարժական շփման արդյունքում, քանի որ սովորում են միմյանցից»,- ասաց զեկուցողը: Նա խոսեց ուսուցչի համագործակցային և թիմային աշխատանքի մասին, նոր մանկավարժության մեջ անդրադարձավ ուսուցչի գործունեությանը:

Զեկուցողն առաջ քաշեց մի շարք կարևոր հարցեր, որոնք պատասխաններ են ակնկալում. դպրոցը հասարակության հայելին է. ի՞նչ դպրոց է մեզ պետք և ի՞նչ հասարակություն՝ դպրոցին, դպրոցը չպետք է լինի պատվեր կատարող, այլ պատվեր տվող, ուսուցիչները ևս պետք է մասնակցեն իրենց վերաբերող հանրային բանավեճերին:

Ս. Խաչատրյանը կարևորեց միջառարկայական, խնդրահենք և համագործակցային ուսուցումը կյանքի ամեն փուլում և տարիքում, անդրադարձավ ուսումնական ծրագրերի բովանդակությանն ու գիտելիքի առանձնահատկություններին:

Զեկուցողը համոզված է՝ համալսարաններում պետք է կարևորվի արժեքային կրթությունը, իսկ տեխնոլոգիաները երբեք չեն կարող փոխարինել ուսուցչին:

Զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՊՄՀ դասախոսներ և ներկա գտնվող ուսուցիչներ:

Հարցերը հիմնականում վերաբերում էին ուսուցչի կամավոր ատեստավորմանը, որի համատեքստում ընդգծեցին՝ վերապատրաստումը պետք է իրականացվի միայն բուհերի միջոցով: Խոսք գնաց նաև կրթության բովանդակության վերանայման մասին:

Ուսուցիչների հարցերին ամփոփիչ պատասխաններ տվեց համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ ասելով, որ բոլոր հիմնախնդիրների շուրջ համալսարանը պատրաստ է երկխոսության:

Վերջում ամփոփեցին՝ Հայաստանում ինչպես իրականացնել նշված փոփոխությունները:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը: Նա մասնավորապես ասաց, որ ՄԱԿ-ի հանձնաժողովի զեկույցի համատեքստում նոր խնդիրներ ու մարտահրավերներ են դրվում ժամանակակից մանկավարժության՝ մասնավորապես մանկավարժական մասնագիտական բարձրագույն կրթության առաջ և թվարկեց այն քայլերը, որոնք պետք են՝ վերաիմաստավորելու մանկավարժական կրթության առաքելությունը, գործառույթներն ու նպատակները, մշակելու մանկավարժական նոր ռազմավարություններ, վերանայելու ուսուցչի դերի և առաքելության, մասնագիտությանը ներկայացվող պահանջների ու կոմպետենցիաները:

Պրոֆեսորը կարևորեց ժամանակակից մանկավարժական բուհում ռեֆլեքսիվ անձի դաստիարակումը, ուսուցիչների և դասախոսների թվային գրագիտությունը:

Դիմանկարի փորձ

Աշխարհն Աշոտ Առաքելյանի աչքերով

«Նա ոչ միայն բացառիկ նկարիչ է՝ բարձր վարպետությամբ և օրիգինալ ու անհամեմատելի տեխնիկայով..., միաժամանակ մարդ՝ աշխարհի հանդեպ ունեցած իր գեղեցիկ աշխարհայացքով: Դրանից է բխում նրա կախարդանքը, մաքուր համեստությունը և շիտակությունը»,- մեր համալսարանի նախկին աշխատակցի, դասախոսի հոբելյանի առիթով իրավացիորեն գրել է Չեխիայի «Սլովացկի Դեննիկ» թերթի գլխավոր խմբագիր Մարտին Նեվիելը:

Աշոտ Առաքելյանը ծնվել է 1948 թվականին: Այդ օրը պապիկի՝ Փարսադանի օջախում մեծ ուրախություն է եղել: Հայրն այդ ժամանակ 25 տարեկան էր, մայրը՝ 21: 1955 թվականին ընդունվել է Երևանի N 40 դպրոցը, իսկ 1971-ին՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի Պատմության ֆակուլտետը, որն ավարտել է 1976-ին: 1972 թվականից մինչև 1991-ը աշխատել է Հայոց պատմության ամբիոնում՝ որպես ավագ լաբորանտ, կաբինետի վարիչ, այնուհետև անցել դասախոսական աշխատանքի: Այժմ այդ ամբիոնի պատվավոր անդամ է և ամեն տարի սիրով է այցելում Հայաստան, նաև հարազատ ամբիոնի գործընկերներին ու իր սիրելի դասախոսներին, ինչպես նաև իր համար մասնագիտական կուռք՝ պատմաբան, պրոֆեսոր Սուրեն Հակոբյանին:

1989 թվականին Աշոտն ամուսնացել է չեխուհի Եվայի հետ, ում հետ երկու տարի ապրել են Երևանում: Եվան սիրով է հաճախել ինստիտուտի հայոց լեզվի արագացված դասընթացներին և հայերեն սովորել:

1988-94 թվականներին, երբ Հայաստանում քաղաքական մթնոլորտն այլ էր, չեխուհի կինը չի կարողացել հարմարվել մութ ու ցուրտ տարիներին ստեղծված պայմաններին, և հարկադրված տեղափոխվել են Չեխիա:

Աշոտն անկեղծանում է՝ երբեք չի հարգել և չի էլ մեղադրել այն մարդկանց, որոնք տնտեսական ու քաղաքական պայմաններից ելնելով լքել են հայրենիքը: Իր պարագայում ընտանիքը կորցնելու խնդրի առաջ էր կանգած, որն էլ նրան կնոջ հետ տարավ Չեխիա: Այս մասին նա միշտ ափոսոսանքով է խոսում, մի տեսակ մեղքի զգացումով. վարվել է իր սկզբունքներին հակառակ:

Չեխիայում Աշոտ Առաքելյանին շուտով աշխատանքի են հրավիրում Օլոմոուց քաղաքի Մանկավարժական ինստիտուտ, սակայն հրաժարվում է լեզվին բավարար չտիրապետելու պատճառով: Երկու տարի Մոսկվայում նկարչության դասընթացների մասնակցելը նրան հնարավորություն ընձեռեց ակտիվորեն անցնել երկրորդ մասնագիտությանը՝ նկարչությանը:

Այսօր արդեն Հայաստանի, Արցախի, Չեխիայի նկարիչների միության անդամ է, Չեխիայի պրոֆեսիոնալ նկարիչների կազմակերպության անդամ: Բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել ոչ միայն Հայաստանում ու Արցախում, այլև Չեխիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Սլովակիայում, Իտալիայում:

Միաժամանակ Չեխիայի «Դենիկ» (Denik) թերթի արտահայտիչային քաղաքական մեկնաբան է, արժանացել է մի շարք պատվոգրերի:

Ճիշտ է նկատել «Սլովացկի Դեննիկ» թերթի գլխավոր խմբագիր Մարտին Նեվիելը, երբ գրել է. «Մեզ մոտ՝ Մորավիայում Աշոտն ապրում է արդեն երկար տարիներ, այդ ժամանակիատվածում նրա մոտ արմատավորվել է մեր եվրոպականը, իսկ մյուս մասով մնում է որպես հայ: Դա արտահայտվում է նրա նկարչության մեջ: Նրա ստեղծագործությունների մի մասը վայրի գեղեցկությամբ աբստրակտ ծաղիկներ են, իսկ մյուսը՝ հավասարակշռված միջին եվրոպականը: Ամեն մի նկարին տալիս է հավասարակշռվածություն և լավատեսություն այնպես, ինչպես ինքն է կյանքում»:

Արցախցու արմատներով Աշոտ Առաքելյանը կյանքի ու գործի մարդ է, իր ծննդավայրի բնաշխարհի գեղեցկություններին կառչած, այդ գեղեցկություններն իր մեջ ամփոփած անհատ: Նրա գեղանկարչության գույները շռայլորեն բխում են հոգուց ու սրտից, հայրենի Արցախի հող ու ջրի երակներից ու շռայլորեն էլ տրվում շրջապատին: Նա իր ստեղծագործական աշխարհն անմնացորդ նվիրում է իրեն շրջապատող աշխարհին, ընկերներին ու բարեկամներին՝ գեղեցիկ գույներով ու զգացողություններով, լավատեսությամբ լցնում նրանց օրը, որ նաև իրենն է: Եվ ընկերները աշխարհը հաճախ դիտում են ոչ թե իրենց, այլ Աշոտի աչքերով. «Եվ դա գեղեցիկ տեսարան է»:

«Հոգուս մեջ Հայաստանն է, և ամեն տարի սիրով եմ գալիս: Կուզեի իմ հարազատ բուհին, ամբիոնին, ուսանողությանը շնորհավորել 100-ամյակի առթիվ և մաղթել ամենայն բարին:

Յուրաքանչյուր մարդու մեջ, իմ կարծիքով, կա երկու մեծ վեհություն՝ Պատիվ և Հայրենիք: Կցանկանայի մեր ուսանողներին մաղթել երջանիկ ապագա, միշտ բարձր պահեն իրենց Պատիվն ու Հայրենիքը»:

Արցախի Հանրապետության վաստակավոր նկարիչ, Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե մեդալակիր, պատմաբան և նկարիչ Աշոտ Առաքելյանը Չեխիայում հասարակական-քաղաքական հարթակներից պարբերաբար խոսում է Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, հանրահռչակում անցյալ դարի մեծ ոճիրը, ելույթներով ու հոդվածներով հանդես գալիս՝ օտար երկրում բարձր պահելով Հայաստանի անունը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

«Իմ աշխարհն այսօր և վաղը»

Հովհաննես Թումանյանի թանգարանի ցուցասրահում նոյեմբերի 1-ին, ՄԱԿ-ի հովանավորությամբ, բացվեց լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես՝ «Իմ աշխարհն այսօր և վաղը» խորագրով՝ նվիրված համալսարանի 100-ամյակին: Ցուցահանդեսին ներկայացվել էին Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի դասախոսների, ուսանողների և շրջանավարտների աշխատանքներ՝ 37 հեղինակի 140 լուսանկարչական աշխատանք:

Ցուցասրահում ներկայացված էին դիմանկարներ, նատյուրմորտներ, հայաստանյան բնանկարներ, այն ամենն, ինչ նկատել էր լուսանկարչի աչքը:

Ցուցահանդեսի գեղարվեստական ղեկավար, ՀՊՄՀ Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Սևադան փաստեց, որ աշխատանքներն ընդգրկուն են, թեմաները՝ բազմաբնույթ, որոնցում արտահայտված է այն ամենն, ինչ կարևոր է կյանքում:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց համալսարանի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսը՝ ընդգծելով, որ ներկայացված աշխատանքները վավերացնում են ՄԱԿ-ի մարդասիրական կարևորագույն թեզերը՝ դրանք դիտելով համալսարանի առաքելության համատեքստում:

Ցուցահանդեսի հովանավորությունն ստանձնած ՀՀ-ում Միավորված ազգերի կազմակերպության մշտական համակարգողի պաշտոնակատար Լիլյա Պիտերս Յահիան կարևորեց ցուցահանդեսը՝ որպես մշակութային ձեռնարկ, որն իր գույներով ու թեմատիկայով կարող է փոխել ցանկացած անհանդուրժողականության ու ատելության միջավայր:

Նա շնորհավորեց համալսարանի 100-ամյակի առթիվ՝ բուհին մաղթելով հարատևություն, նաև ողջունեց անչափ կարևոր ձեռնարկի մասնակիցներին՝ վստահեցնելով, որ լուսանկարչական արվեստը դարի մարտահրավերներին դիմակայելու միջոց է:

Սերունդների կապը խորհրդանշող ցուցահանդես

Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում Տեխնոլոգիական կրթության ամբիոնը կազմակերպել էր ուսանողների և շրջանավարտների տեխնոլոգիական աշխատանքների ցուցահանդես:

«Ցուցահանդեսի միտքը, գաղափարը և նպատակը ուղղված է մեր համալսարանի 100-ամյակին: Մեզ հաջողվել է ի մի բերել ուսանողների և շրջանավարտների աշխատանքները և կազմակերպել այս գեղեցիկ ցուցահանդեսը:

Կարծում եմ սա այն բուհն է, որը պետք է արժանանա պետության ուշադրությանը, որովհետև սա այն դարբնոցն է, որտեղ պատրաստում են ուսուցիչներ, որոնք էլ ուսուցանում են ապագա քաղաքացուն, զինվորին ու հերոսին»,-ասաց ամբիոնի վարիչ Արտակ Սահրադյանը:

Ցուցահանդեսը բազմաբնույթ էր. ներկայացվել էին ձեռագործ աշխատանքներ, մոդելներ, տիկնիկներ, ասեղնագործության նմուշներ, ստվարաթղթե, թաղիքե աշխատանքներ:

Երևանի N 177 հիմնական դպրոցի տեխնոլոգիայի ուսուցչուհի Կարինե Շամիրյանը ներկայացրել էր թաղիքագործություն թեման: Թաղիքը հին հայկական մշակույթ է, որի ներքո ներկայացված էին սովորողների աշխատանքները՝ մարաշի ասեղնագործությամբ պայուսակներ, թաղիքե գլխարկներ, հայկական տարազով տիկնիկներ, նաև մետաքսի և բրդի համադրությամբ շարֆեր՝ վրան զարդանախշեր: Աշխատանքները միայն բնական նյութերով են պատրաստվել՝ ընդգծեց ուսուցչուհին:

Արմավիրի մարզի Հացիկի միջնակարգ դպրոցի տեխնոլոգիայի և կերպարվեստի ուսուցչուհի Գայանե Ասատրյանի նախաձեռնությամբ ներկայացվել էր իր և դպրոցի աշակերտների աշխատանքները: ՀՊՄՀ շրջանավարտը սիրով խոսեց հարազատ բուհի և ֆակուլտետի մասին, ներկայացրեց երեխաների ձեռքով պատրաստված տիկնիկները, որոնք արվել են դպրոցի տիկնկային թատրոնի համար, նաև հայկական ազգային նախշերով կարպետները, զանազան նյութերով պատրաստված զարդերը:

Ազգային նախշերով կարպետների մոտ դպրոցականները հանդես եկան ազգային երգի հրաշալի կատարումներով:

Վլադիմիր Մկրտչյանը ավելի քան երեք տասնամյակ ուսուցիչ է աշխատում: Նա Աբովյան քաղաքի N 2 հիմնական դպրոցի տեխնոլոգիայի ուսուցիչն է: Ցուցահանդեսում նա ներկայացրել էր տղաների՝ դասաժամերին և խմբակների պարապմունքներին խառատային հաստոցի վրա կատարված, նաև ձեռքի աշխատանքներ: Այս ուսումնական տարում դպրոցում ներմուծել են խաչքարագործություն. ներկայացված էին խաչքարագործության առաջին նմուշները: Միաժամանակ տարբեր թափոններից պատրաստված աշխատանքներ էին ներկայացվել՝ կակտուս, դդում և այլն: Դպրոցականները ստվարաթղթե թափոններին նոր կյանք էին պարգևել:

Ցուցահանդեսը ոչ միայն խորհրդանշանական էր՝ նվիրված բուհի հոբելյանին, այլև արտացոլում էր համալսարան-դպրոց սերունդների կապը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հաստատուն քայլերով

Ուսանողական տարիները գրեթե բոլորի մոտ վառ ու գունեղ հուշեր են արթնացնում: Սկզբում դեպի կրթօջախ տանող քայլերդ երերուն են, բայց առավել կարևոր է, որ այդ նույն կրթօջախից դուրս գալիս լինես վստահ և հաստատուն քայլերով և գիտելիքի որոշակի պաշարի ուղեկցությամբ:

2010 թ.-ին ընդունվել եմ Խ.Աբովյանի անունը կրող Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետը, սովորել «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» բաժնում:

Մասնագիտության ընտրության հարցը կարևոր ընտրություն է, բայց մինչ ուսումնառությունս սկսելն առանձնապես պատկերացում չունեի մասնագիտությանս առանձնահատկությունների մասին: Բակալավրիատի 4 տարիների ընթացքում համակուրսեցիներիս հետ և դասախոսական անձնակազմի ուղղորդմամբ սկսեցի մասնագիտությանս բազմաշերտությունն ուսումնասիրել: Այս ընթացքում բուհում անմասն չէի մնում նաև ուսանողական առօրյայից՝ ինտելեկտուալ ակումբ, բանավեճի ակումբ, մրցույթներ, նոր ծանոթություններ, նոր ձեռքբերումներ:

Հետո ուսումս շարունակել եմ նույն բաժնի մագիստրատուրայում, որի ընթացում ուսման բազմազբաղ առօրյային ավելանում է գիտահետազոտական մագիստրոսական աշխատանքի փուլը. ես ընտրել էի «Հայ գրքի և գրչության արվեստը միջնադարյան Հայաստանում. քննական վերլուծություն» թեման, որը գիտական ղեկավարիս անմիջական մասնակցությամբ որպես զեկուցում ներկայացրել եմ նաև ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան գիտական նստաշրջանին (ապրիլի 25-29, 2016 թ.):

Մագիստրատուրայում սովորելու ժամանակ մրցութային կարգով հնարավորություն ընձեռվեց մասնակցել «Ամառային դպրոց» փոխանակման ծրագրին, որի շրջանակում հնարավորություն ստացա լինել Ֆինլանդիայի Օուլու քաղաքի նույնանուն համալսարանում:

Համալսարանում կրթության այս տարիների ընթացքում, գիտելիքներից զատ, ունեցել եմ սիրելի դասախոսներ, որոնք ինձ համար եղել են բարեկամ, ավագ ընկեր ու սրտացավ խորհրդատու:

Բուհն ավարտելուց շատ չանցած սկսել եմ աշխատել իմ մասնագիտությամբ և մինչ այժմ էլ շարունակում եմ աշխատել Հայաստանի Ամերիկյան համալսարանում որպես տեղեկատու-գրադարանավար:

Արմինե ՄԵԼԻՔՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ, Հայաստանի Ամերիկյան համալսարանի Փափազյան գրադարանի տեղեկատու-գրադարանավար

Սովորեցրին սիրել թանգարանը

Ես Մարջան Պետրոսյանն եմ: Ավարտել եմ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի «Թանգարանային գործ և պատմամշակութային կառույցների պահպանություն» բաժինը: Աշխատում եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում որպես ֆոնդապահ: Աշխատելով թանգարանում՝ հասկացա, որ լիարժեք չեմ տիրապետում թանգարանային գործին և թանգարանային առարկաների հետ տարվող խնամքին: Որոշում կայացրի ընդունվել Մանկավարժական համալսարան: Սովորելու տարիներին հասկացա, որ շատ կարևոր է հմուտ մասնագետների կողմից կրթվել, ձեռք բերել բազային գիտելիքներ: Համալսարանում ուսանելու տարիներին սովորեցի ավելի ճիշտ ուսումասիրել, հաշվառել, վերլուծել, պահպանել ու խնամել մեր արվեստի գործերը: Ուսումնառության ընթացքում ինձ սովորեցրին սիրել թանգարանը:

Վերջին յոթ տարիներին զբաղվում եմ թանգարանային տեքստիլ առարկաների վերականգնումով: Մասնագիտանալով այս մասնագիտության մեջ՝ գտա մեկ ուրիշ աշխարհ, որ կարող եմ նոր կյանք տալ թանգարանային առարկաներին, որոնց մեջ է մեր մշակույթը, մեր պատմությունը և մեր ինքնությունը: Ուրախ եմ նաև, որ իմ աշխատանքով հնարավորություն ունեմ դիպչելու դարեր առաջ ստեղծված հրաշալի ստեղծագործություններին և այն սերդեսերունդ փոխանցելու:

Մարջան ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ

Սիրված երգերի նոր մեկնաբանությամբ

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արուսյակ Կոստանյանի երաժշտական աշխատության շնորհանդեսն ուղեկցվեց դասական երաժշտական հայտնի ստեղծագործությունների կատարումներով: Հեղինակն իր գրքում ներկայացրել էր հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ, մեթոդական ցուցումներ:

Միջոցառման ընթացքում ներկաները ունկնդրեցին Շառլ Ազնավուրի, Տիրան Ժորժ-Կառվարենցի, Ալեքսեյ Հեքիմյանի, Արամ Սաթյանի, Արամ Ավագյանի, Արթուր Գրիգորյանի, Էդգար Հովհաննիսյանի և այլոց ստեղծագործությունները:

Անցյալ սերնդի ճանաչված ու սիրված ստեղծագործությունների վոկալ և գործիքային կատարումներով ներկաներին հիացրին Արուսյակ Կոստանյանը, Վազգեն Մինասյանը, Լիլի Խաչատրյանը, Արմինե Օշախյանը, Տիգրան Ալավերդյանը, Մարիաննա Ավետիսյանը:

«Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ, մեթոդական ցուցումներ» աշխատությունում հեղինակն ընդգրկել էր հայ կոմպոզիտորների և երգահանների ճանաչված ու առավել սիրելի երգերի դաշնամուրային փոխադրումները՝ որպես մանրանվագներ:

Գիրքը նախատեսված է բարձրագույն երաժշտական հաստատությունների, քոլեջների, երաժշտական դպրոցների, կատարողական հնարավորություններ ունեցող դաշնակահարների և երաժշտասեր հանրության համար: Որոշ փոխադրություններ ներկայացված են բարդ, միջին բարդության և պարզ տարբերակներով:

Համերգային ծրագրի վերջում մասնակիցները միասին կատարեցին Էրեբունի-Երևան երգը:

«Հաճելի էր լսել ժամանակին շատ սիրված երգերը նոր փոխադրումներումներով: Դրանք վերապրեցնում են մեզ,-ասաց անվանի կոմպոզիտոր Արամ Սաթյանը:- Օրինակ «Իմ կապույտ երազ» երգն արդեն կեսդարյա պատմություն ունի: Այն հնչել է Զառա Տոնիկյանի կատարմամբ, հետաքրքիր էր դաշնամուրային ստեղծագործությունը նոր մեկնաբանմամբ»:

Սիրված կոմպոզիտորը կարևորեց նման ձեռնարկները՝ ասելով. «Կան երգեր, որոնք մնայուն են, նրանք ժամանակի հետ այլ մեկնաբանություններով պետք է ներկայացնել նոր սերնդին»:

Մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսների և օրվա «մեղավորի»՝ Արուսյակ Կոստանյանի՝ դասական երաժշտական կատարումները հանդիսատեսին հաճելի պահեր, զգացողություններ ու լավ տրամադրություն պարգևեցին՝ խոստանալով մշակութային միջոցառումների շարունակականություն:

Խաղաղության կանգեր

Ուբն անց երեսուն րոպե. զանգը հնչում է, քո բարևով նստում են, օր են սկսում, և սկսվում է քառասունհինգ րոպե տևող մի աշխարհ: Դու նրանց հետ խոսելու ես մեր բոլորի ունեցած ամենաթանկի՝ մայրենիի մասին: Քեզ հետ շփվելուց հետո նրանք կամ կսիրեն Տերյանին, տանը կպատմեն, այգում կնստեն ու կկարդան կամ շրխկոցով կփակեն գիրքը: Իսկ նրանք հաստատ կփակեն, եթե կեղծես, որովհետև դու երբեք չես կարող կեղծել: Կեղծելու մասին միայն մտածելն արդեն ձախողում է:

Քաղաքի անմիջապես սրտում է Խ. Աբովյանի անվան N 2 հիմնական դպրոցը: Այն քաղաքի ամենահին դպրոցներից է, որի ավանդույթի ուժը բակից ու դռներից ներս մտնելիս կարելի է զգալ: Այս անընդհատ փոխվող, չգիտես՝ ուր սլացող աշխարհում այնքան սիրտ շոյող է մի ամբողջ դպրոց տեսնել աշակերտական ճեփ-ճերմակ վերնաշապիկներով… Եվ այդ աշակերտական հագուստը նրանց թելադրում է համապատասխան կեցվածք, զգաստություն՝ մեծի, ուսուցչի հետ խոսելու, որ գնալով այնքան է մեզ բոլորիս պակասում…

Այս շրջանը կարծես ծիածանի կապույտը լիներ, որ հոգու խաղաղության է նման, բայց հետո պիտի անծիր կարոտ դառնա…

Այդ մեծ ամրոցում ինձ դիմավորեց հայեցի՜, գիտակ տիկին Աբգարյանը, որի ազգանունը անտարբեր անցնել թույլ չէր տվել…

Եվ ես վստահ եմ, որ հիմա էլ տիկին Աբգարյանը կարդում է աշակերտների համար, որովհետև նա սովորեցնում է ամենից կարևորը՝ հարգանքը և ձգտումը դեպի գիրքը, արվեստը, գեղեցիկը:

Դպրոցը ամենեևին չի սահմանափակվում այն քառասունհինգ րոպեով, որն անցկացնում ես դասասենյակում: Դպրոցը սկսվում է ավելի վաղ քան ուբն անց երեսուն րոպեն և ավարտվում…իսկ արդյոք նույնիսկ երազում ավարտվու՞մ է դպրոցը…

Նրանք այնքան գեղեցիկ են, այնքան համահունչ՝ իրենց դասղեկի և մայր լեզվի ուսուցչուհու գլխավորությամբ: Եվ նրանք արեցին այնպես, որ համալսարանական կրթության այս կարևորագույն շրջանը՝ իմ ամփոփիչ պրակտիկան, կապույտ հագնի, որ խաղաղությունն է ու հետո պիտի անծիր կարոտ դառնա…

Տաթև ԹԱՄՐԱԶՅԱՆ
Բանասիրության ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանողուհի

Ես ընտրել եմ Մանկավարժականը

Ես Նարինե Նանյանն եմ, սովորում եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի Տարրական կրթության և մեթոդիկայի բաժնում: Համալսարանի և մասնագիտության ընտրության հարցի մասին երկար չեմ մտածել. մանկուց երազել եմ մանկավարժ դառնալ, որովհետև միշտ մտածել եմ՝ մանկավարժի գործը ամենահարգվածն է, ամենապատվաբերը: Իսկ ինչու հենց դասվար. նախ ասեմ, որ շա՜տ-շա՜տ եմ սիրում աշխատել փոքր երեխաների հետ, նրանք շատ անկեղծ ու պարզ են, բայց դրանից զատ, ավելի շատ ոգեշնչվել եմ իմ առաջին ուսուցչուհու՝ դասվարի կերպարից:

Այս բաժին դիմելուց առաջ հասկանում էի, թե ինչ մեծ պատասխանատվություն է լինել երեխաների առաջին ուսուցիչը, որովհետև առաջին ուսուցիչը երբեք չի մոռացվում, մնում է սովորողների հիշողության մեջ: Դասվարը մեծ դեր ունի նրանց մտածելակերպի, դաստիարակության, աշխարհայացքի ձևավորման գործում. նա կրթության որակի հիմքն է դնում, որի վրա կառուցվում է մնացյալը:

Այժմ ես սովորելու եմ հեռակա ուսուցման համակարգում, որի դասերն ավելի ուշ են սկսվում: Բայց սովորելու իմ ցանկությունն այնքան մեծ էր, որ ուզում էի ավելի շուտ հաճախել համալսարան: Դիմեցի նախապատրաստական կրթության բաժնի պետ Լևոն Հարությունյանին և Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանին, որպեսզի թույլ տան ինձ սեպտեմբերից մասնակցել առկա ուսուցման համակարգի դասերին մինչև իմ դասերն սկսվեն:

Ես սիրով ու մեծ պատրաստակամությամբ եմ հաճախում դասերին, միաժամանակ սովորում եմ ծրագրավորման լեզու և եռաչափ մոդելավորում:

Եկավ հեռակա ուսուցման միասնական քննությունների ժամանակը, և ես, պահպանելով հայոց լեզվի քննության արդյունքը, քննություն հանձնեցի մաթեմատիկայից: Լավ արդյունքով էր պայմանավորված իմ հայտնվելը Մանկավարժականում: Այժմ ինձ համար ավելի հեշտ է. ես արդեն ծանոթ եմ բուհին, դասախոսներին, ուսանողական կյանքին, ինձ համար ավելի հեշտ է մասնակցել դասերին:

Ես հպարտ եմ, որ ընտրել եմ Մանկավարժական համալսարանը:

Նարինե ՆԱՆՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի Տարրական կրթության և մեթոդիկայի բաժնի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրս

Շնորհավորում ենք

Օրերս կայացավ ՀՀ Բժշկական գիտությունների ակադեմիայի հերթական նիստը, որտեղ առաջին անգամ ՀՊՄՀ պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Գրիգորյանն ընտրվեց բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս):

Ծնունդդ շնորհավոր, 100-ամյա մեր համալսարան

«Կրթությունն ազգի դեմքն է, իսկ Մանկավարժական համալսարանը 100-ամյա այն դարբնոցը, որը բազմադարյա հայ դպրոցին հաղորդում է ժամանակի շունչը: Այն պետք է հավերժ ապրի՝ ուսուցման ուղին հարթելու համար», -այսպես ՀՊՄՀ N 57 հիմնական դպրոցի սաները շնորհավորեցին բուհի հոբելյանը՝ կառույցի հիմնադրումը համարելով խոշոր իրադարձություն մանկավարժական հանրության համար:

4ա և 4բ դասարանների աշակերտները պատահական չհամարեցին, որ բուհը կրում է Մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը. հայ ականավոր մանկավարժի համար մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է, իսկ ազգի պահողը, իրար հետ միացնողը՝ լեզուն ու հավատը:

Տոնական ձեռնարկին ,ներկաե Խաչատուր Աբովյանը հայրենասիրության և հերոսության դաս տվեց՝ սովորեցնելով ճանաչել ժողովրդին, սիրել նրա նիստուկացը, հիանալ նրա իմաստությամբ ու կենսունակությամբ:

Աշակերտները հպարտորեն նշեցին՝ դպրոցը, որ գործում է բուհի կազմում, պահպանում է համալսարանի ստեղծած ավանդույթները, և իր արժեքները փոխանցում կրտսեր սերնդին՝ դարձնելով նրա արժանի զավակը:

Միջոցառումն ուղեկցվեց փոքրիկ երգչախմբի կատարումներով և բեմադրությամբ:

«Ծնունդդ շնորհավո՛ր, մեր համալսարան: Մենք հավատում ենք քեզ, քո անսպառ լույսին, անվերջ ընթացքին: Մենք գալիս ենք քեզ ընդառաջ և քո հետևից»,- միջոցառման ավարտին նշեցին ուսուցչական կազմի ներկայացուցիչներն ու հավելեցին՝ լուսավորիր մեր ճանապարհը, դարձիր մշտնջենական լույս՝ նվիրյալ ուսուցիչների, ապագայի աչքերով նայող փոքրիկների համար:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Նոյեմբերի 26-ին Մանկավարժական համալսարան էին այցելել N 104 դպրոցի 7ա դասարանի 35 աշակերտներ: Նրանք եղան համալսարանի պատմության թանգարանում, գիտական գրադարանում, Լրատվության և հանրության հետ կապերի վարչությունում, ուր ծանոթացան «Մանկավարժական համալսարան» թերթի և Ռադիոֆամայի աշխատանքներին: Երեխաներին ուղեկցում էին դպրոցի տնօրեն Նաիրա Մարտիրոսյանը, դասղեկ Մարիամ Նավասարդյանը, պրակտիկայի ղեկավար Աիդա Կոծինյանը:

Լույս է տեսել «Հայագիտական հանդեսի» հոբելյանական համարը



Լույս է տեսել ՀՊՄՀ «Հայագիտական հանդեսի» հոբելյանական թողարկումը՝ հանդեսի խմբագրական խորհրդի ներածականով, ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանի, ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայագիտական հանդեսի գլխավոր խմբագիր Մարտին Գիլավյանի, Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանի, ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Գյուրջինյանի, Վ. Պարտիզունու անվան Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի,Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանի, ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանի, Գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի, գրող, հրապարակախոս, 1969 թ. շրջանավարտ Հովհաննես Պապիկյանի, Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Աննա Կոստանյանի՝ տարեգրություն, հուշեր պարունակող հոդվածներով ու շնորհավորական ուղերձներով:

Մասնակցեցին ծառատունկի

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները նոյեմբերի 5-ին ուղևորվեցին Արագածոտնի մարզ՝ մասնակցելու համապետական ծառատունկի: Ծառատունկն սկսելուց առաջ Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանն ուսանողներին ներկայացրեց էկոլոգիայի, նրա նշանակության և էկոլոգիական համընդհանուր խնդիրների մասին:

Այնուհետև 4090 մ բարձրություն ունեցող Արագած լեռան փեշերին դասախոսները և ուսանողները բաժանվեցին խմբերի և անցան ծառատունկի:

«Առաջին անգամ էի մասնակցում ծառատունկի: Կարևորում եմ նմանատիպ ծրագրերը և, եթե կրկին հնարավորություն լինի, սիրով կմասնակցեմ»,- ասաց Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Վարդուհի Մուրադյանը:

Նույն ֆակուլտետի կենսաբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Սարգսյանն էլ նշեց. «Լինելով կենսաբան՝ առաջին անգամ չէ, որ մասնակցում էի ծառատունկի: Տպավորություններս շատ լավն են, քանի որ օգնել ենք մայր բնությանը, քանի որ բնությունն իսկապես ունի մեր աջակցության կարիքը: Անչափ ուրախ եմ, որ ես և իմ ընկերները մեր փոքրիկ, բայց կարևոր ներդրումն ունեցանք այս գործում»:

Ծառատունկից հետո աբովյանականներն այցելեցին Հայոց այբուբենի հուշահամալիր՝ տառերի պուրակ, որից հետո ուղևորվեցին 13-րդ դարում կառուցված Սաղմոսավանք վանական համալիր:

Ժենյա ԱԲԳԱՐՅԱՆ

Բնության պահպանությունը մեր ձեռքերում է

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողական խորհրդի սոցիալական հանձնաժողովի և ՀՊՄՀ հենակետային վարժարանի համագործակցության շնորհիվ կայացավ «Մեր դերը բնության պահպանության գործում» խորագրով միջոցառումը, որը վարում էր ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մարիամ Սարգսյանը: Հանդիպման առաջին հատվածում սոցիալական հանձնաժողովի պատասխանատու Արմինե Հովհաննիսյանը և համալսարանի հենակետային վարժարանի սան, մաքրապատում ծրագրի կամավոր Ռուբեն Խալափյանը ներկայացրին աղբի վնասակար հետևանքների, տարբեր երկրներում դրա վերամշակման և առաջացրած հնարավոր խնդիրներից ազատվելու տարբերակների մասին: Այնուհետև «Աղբ թափելն ամոթ է» նախաձեռնության հիմնադիր Հակոբ Միկոյանը ներկայացրեց մաքրապատում ծրագրի ու իր ծավալած գործունեության մասին, նաև պատասխանեց ներկաների հարցերին:

Քննարկեցին նաև շրջակա միջավայրի աղտոտման հետևանքների և կանխման միջոցների հարցեր, մասնակիցները իրենց կարծիքներն ու առաջարկները:

Միջոցառմանը ներկա էր նաև Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը, ով նույնպես առաջարկեց խնդրի լուծման հնարարավոր տարբերակներ:

Հանդիպումը բովանդակալից էր և ուսուցողական, և ինչպես իր ելույթում նշեց Մարիամ Սարգսյանը, մեծ է մարդու դերը բնության պահպանության գործում, և բնապահպանական մի շարք խնդիրներ կվերանան, երբ սովորենք խնամքով վերաբերվել մայր բնությանը:

Վարդուհի ՄՈՒՐԱԴՅԱՆ
Աստղիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՈՒԽ լրատվական հանձնաժողովի անդամներ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 15.11.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ